ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«12» օգոստոսի 2026թ. N ՄՈ/514-Ա

ք. Արմավիր

ՍԱՄՍՈՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԻ ՇԱՐՔ ԲՆԱԿԱՎԱՐՅԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման N1 հավելվածի 3-րդ, 7-րդ և 9-րդ կետերը, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված 3-րդ հավելվածի 20-րդ կետը և նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի խորհրդական Սամսոն Սարգսյանի 2026 թվականի օգոստոսի 12-ի զեկուցագիրը՝

որոշում եմ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի խորհրդական Սամսոն Սարգսյանին 2026 թվականի օգոստոսի 12-ին գործուղել Հայկական, Նոր Արտագերս, Նոր Կեսարիա, Ամասիա և Այգեվան բնակավայրեր՝ 2021-2026թթ. ընթացքում պետական միջոցներով կառուցվող և վերանորոգվող ուսումնական հաստատությունների շենքերի, շինությունների, տարածքների, գույքի և ենթակառուցվածքների պահպանության վիճակին տեղում ծանոթանալու, առկա խնդիրներն արձանագրելու և համապատասխան ուսումնասիրություն իրականացնելու նպատակով:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Արայիկ Հակոբյանին՝ ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գործուղման ծախսերի հաշվարկումը և վճարումը:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությանը (գլխավոր մասնագետ՝ Ա. Համբարձումյան)՝ աշխատակցի փոխադրումն իրականացնելու համար ապահովել հերթապահ մեքենայի տրամադրումը:

4. Փոխադրումն իրականացնել Nissan Tiida մակնիշի 638LL70 համարանիշի ավտոմեքենայով:
5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի խորհրդական Սամսոն Սարգսյանին՝ գործուղումից վերադառնալուց հետո եռօրյա ժամկետում ներկայացնել հաշվետվություն գործուղման արդյունքների վերաբերյալ:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ